

## ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 29 Սեպտեմբերի, 2008

Հայաստանի անկախության վերականգնման տօնի առիթով Երկուշաբթի, Սեպտեմբերի 22-ին ՀՀՂ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը այցելեց Լոս Անջելոսում ՀՀ Գլխաւոր Հիւպատոսարան, ուր ընդունուեց Գլխաւոր Հիւպատոս Արմէն Լիլոյեանի կողմից: Կենտրոնական Կոմիտէի պատուիրակութեան անդամները, որին մաս էին կազմում Մարտիկ Կապուտեանը, Արամ Գալուստեանը եւ Յովան Թաշճեանը Արեւմտեան Ամերիկայի շրջանի Դաշնակցական մարմինների եւ ընկերների անունից շնորհաւորեցին Հայաստանի անկախութեան վերականգնման տօնը եւ փոխանցեցին հայոց պետականութեան հզօրացման գծով իրենց բարեմաղթութիւնները: Հանդիպումը առիթ հանդիսացաւ միասնաբար քննելու արտերկրի հայութեան եւ մասնաւորաբար գաղութիս կեանքում հայրենիքը կենդանի, ապրող ու շնչող իրականութեան վերածելու առաջնահերթութիւնը: Զրուցակիցները կարելորութեամբ անդրադարձան հայրենիքի անկախութեան եւ պետականութեան գաղափարը երիտասարդութեան ու նոր սերնդի մօտ ամրապնդելու ու մեր հայրենիքի ու ժողովրդի կեանքում նրանց լուրջ դերակատարութեան մղելու անհրաժեշտութեանը: Այս առումով ոգեւորիչ է հաստատել, որ ամերիկահայ երիտասարդութիւնը բազմաթիւ ծրագրերով իր ներդրումն է ունենում հայրենիքում: ՀՀՂ Պատուիրակութեան անդամները մեծ ուրախութեամբ իրազեկուեցին, որ երկքաղաքացիութեան օրէնքի հաստատումից ի վեր, բազմաթիւ սփիւռքահայեր դիմում են Գլխաւոր Հիւպատոսարան՝ անհրաժեշտ տեղեկութիւններ ստանալու եւ դիմումներ ներկայացնելու համար, ինչը նոր իմաստ եւ բովանդակութիւն է տալիս անկախութեան գաղափարին եւ խթան հանդիսանում՝ հայրենադարձութեանը:



Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի ճամբարում վերջերս տեղի ունեցաւ ՀԵՂ-ի ընդհանուր ժողովը, որին մասնակցեցին Կալիֆորնիայի, Նեւադայի, Արիզոնայի ու Տեքսասի 14 ուխտերի եւ ՀՀՂ Պատանեկան միութեան ընդհանուր վարիչ մարմնի ներկայացուցիչները, ինչպէս նաեւ՝ ՀՀՂ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի անդամ՝ Արամ Գալուստեանը: Ընդհանուր ժողովի ընթացքում քննարկուեցին ՀԵՂ-ի անդամների թիւը բարձրացնելու, համայնքի քաղաքական կեանքին զարկ տալու, ամերիկահայ համայնքի հետ յարաբերութիւնները սերտացնելու, Հայաստանին յաւելեալ աջակցութիւն ապահովելու եւ մարդկային ու քաղաքացիական իրաւունքների կացութիւնների հետ կապեր հաստատելու կարելիութիւնները: Սոյն խորհրդակցութիւնների հիման վրայ ճշտորոշուեցին առաջիկայ տարեշրջանի աշխատանքները: Այնուհետեւ տեղի ունեցաւ 2008-2009 տարեշրջանի ՀԵՂ-ի Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական վարչութեան ընտրութիւնը: Նոր մարմնի անդամներն են՝ Վաչէ Թովմասեանը (ատենապետ), Պերճ Բարսեղեանը (փոխատենապետ), Տիգրան Ասլանեանը (ատենադպիր), Վաչէ Սողոմոնեանը (գանձապահ) եւ Լեւոն Շանթ Տեմիրճեանը, Թալին Ալթունեանն ու Շանթ Չարշաֆեանը (խորհրդականներ):



Արեւմտեան Հայաստանում Սեպտեմբերի 9-ին հանրակառքի վթարի զոհ դարձած 16 իրանահայերի յիշատակին Լոս Անջելոսում գործող իրանահայ վեց կազմակերպութիւններ, որոնց թւում՝ Լոս Անջելոսի Իրանահայ միութիւնը, «Նոր Ջուլայի բարեկամներ» յանձնախումբը, Թաւրզահայերի յանձնախումբը, Ուրմիոյ հայրենակցական միութիւնը, Ամերիկահայ մշակոյթի Փերիա մշակութային միութիւնը, ինչպէս նաեւ ՀՄԸՄ-ի Գլենդէլի «Արարատ» եւ Բըրբանքի «Սիփան» մասնաճիւղերը, «Դաւթեան - Մարիամեան» կրթական հաստատութիւնը եւ Հայ-Ամերիկեան տարեցների միութիւնը, որոնց անդամների մեծամասնութիւնը իրանահայեր են, Կիրակի, Սեպտեմբերի 21-ի առաւօտեան համատեղօրէն կատարեցին հոգեհանգստեան եւ յիշատակութեան յատուկ արարողութիւններ՝ Գլենդէլի Սք. Աստուածածին եկեղեցում: Յաւարտ Սք. Պատարագի կատարումը հոգեհանգստեան արարողութեան ժամանակ, «Սիփան» մասնաճիւղի սկաւտները հանդիսաւոր կերպով մուտք գործեցին եկեղեցի եւ իրանահայ յիշեալ կազմակերպութիւնների կողմից ծաղկեպսակ գետեղեցին Սուրբ Խորանի առջեւ՝ ի յիշատակ 16 զոհերի: Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ Սք. Աստուածածին եղեկեցոյ «Տէր Պետրոսեան» սրահում տեղի ունեցաւ յիշատակութեան միջոցառում,

որին ներկայ գտնուեցին բազմահարիւր սգակիր հայեր, հիմնականում Լոս Անջելոսում հաստատուած իրանահայեր:



Ուրբաթ, Սեպտեմբերի 12-ին, ՀՕՄ-ի Փասադէնայի «Սօսե» մասնաճիւղը կազմակերպել էր իր 2008-2009 տարեշրջանի առաջին ձեռնարկը, որը նուիրուած էր մշակոյթի ամսուան՝ «Ուխտագնացութիւն դէպի արմատներ» բնաբանով: Միջոցառմանը ներկայ էին 70-ից աւելի ՀՕՄ-ուիիներ՝ զանազան մասնաճիւղերից, ինչպէս նաեւ բարեկամներ ու այլ հիւրեր: Ներկաները հաճոյքով ճաշակեցին հայկական աւանդական ճաշերը, որից յետոյ Արեւմտեան Յայաստան յաճախակի այցելութիւններ կազմակերպող Արմէն Արոյեանը լուսապատկերների ցուցադրութեամբ խօսեց Արեւմտեան Յայաստանի վանքերի, եկեղեցիների, խաչքարերի ու բերդերի մասին:



Երկուշաբթի, Սեպտեմբերի 15-ին, Գլենդէլի Հանրային գրադարանում տեղի է ունեցել յուշերեկոյ նուիրուած Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանի ծննդեան 100-ամեակին: Միջոցառմանը, որը կազմակերպել էր Կալիֆորնիայի Հայ գրողների միութիւնը, ներկայ էին գրողներ, գիտնականներ, մտաւորականներ եւ պաշտօնական հիւրեր: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Վիկտոր Համբարձումեանի հին ընկերներից, Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի անդամ Աշոտ Կարապետեանը, որն անդրադարձել է աստղագետի կեանքին ու նուաճումներին: Յուշապատումներով ելոյթներ են ունեցել նաեւ Բիւրականի աստղադիտարանի նախկին գիտաշխատողներ՝ դոկտ. Մամիկոն Մնացականեանն ու դոկտ. Աշոտ Ղարիբջանեանը:



Կիրակի, Սեպտեմբերի 14-ի երեկոյեան ժամը 6-ին, մեծարանքի յատուկ միջոցառում է տեղի ունեցել Գլենդէլի «Presbyterian» եկեղեցում՝ ի պատիւ Հայաստանի պետական ակադեմական երգչախմբի գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր խմբավար՝ պրոֆ. Յովհաննէս Չեքիճեանի: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնն են բերել անուանի արուեստագետներ: Միջոցառմանը գնահատանքի ու օրինանքի խօսքով ելոյթ է ունեցել Թեմակալ Առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանը:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations@ARF1890.com](mailto:PublicRelations@ARF1890.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: